

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 15

« 17 » « 08 » 2017թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017թ. ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի ԹԻՎ 05
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանու 2017թ. օգոստոսի 17-ի
թիվ 05 հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերքանուշ համայնքի
քաղաքաշինության կանոնադրության հաստատման մասին:
2. Բերքանուշ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:


Որոշումը ընդունվեց միաձայն

- | | | |
|----------------------|------|--|
| 1. Բաղդասյան Սուրիկ | կողմ | |
| 2. Իսաջանյան Գոհարիկ | կողմ | |
| 3. Հովսեփյան Հովսեփ | կողմ | |
| 4. Պետրոսյան Մելսիդա | կողմ | |
| 5. Վարդանյան Տիգրան | կողմ | |
| 6. Աղամյան Վարդան | կողմ | |

Համայնքի ղեկավար



Մ.Գ. Հայրապետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 16-Ն

« 17 » « 08 » 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 30-րդ կետով՝

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերքանուշ համայնքի քաղաքաշինական/կանոնադրությունը համաձայն հավելվածի:

Որոշումը ընդունվեց միաձայն

- | | |
|-----------------------|------|
| 1. Բաղդասարյան Սուրիկ | կողմ |
| 2. Իսախանյան Գոհարիկ | կողմ |
| 3. Հովսեփյան Հովսեփ | կողմ |
| 4. Պետրոսյան Մելսիդա | կողմ |
| 5. Վարդանյան Տիգրան | կողմ |
| 6. Աղամյան Վարդան | կողմ |

Համայնքի ղեկավար



Մ.Գ. Հայրապետյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական, հողային օրենսդրության և այլ իրավական ակտերի համապատասխան սույն կանոնադրությունը սահմանում է քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացակարգերը Բերքանուշ համայնքում, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (կառուցապատողներ, նախագիծ մշակողներ և շինարարություն իրականացնողներ) իրավասությունները և պարտականությունները:

II. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2. Բերքանուշ համայնքի հողերի նպատակային և գործառական նշանակությունները սահմանվում են համայնքի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով:
3. Հողամասերի թույլատրված օգտագործումը սահմանվում է հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:

III. ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՅՈՒՑԹՈՎ (ԱՃՈՒՐԴՈՎ) ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

4. Բերքանուշ համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են
մրցույթային և օտարվում՝ աճուրդային կարգով Բերքանուշ համայնքի ղեկավարի՝ մրցույթ (աճուրդ) հայտարարելու մասին որոշման հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ, 61-րդ, 67-70-րդ, 77-80-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածներով, Հրապարակային սակարկությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատվելու մասին թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28-րդ և 43-59-րդ կետերով:

IV. ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Հողհատկացման հիմքերի վերականգնման ընթացակարգով դիմողին տրամադրվում է օրենքի և իրավական ակտերի պահանջներին համապատասխան կառուցված շինություններով զբաղեցված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ այն հողամասը, որը (կամ նրա մի մասը) հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր տրամադրել հրապարակային սակարկությունների միջոցով:
6. Դիմումի հիմնավորվածության մասին եզրակացություն է տալիս աշխատակազմի համապատասխան մասնագետը:
Դիմումը հիմնավորված չլինելու դեպքում դիմողին տրվում է համապատասխան գրավոր պարզաբանում:
7. Հիմք ընդունելով աշխատակազմի համապատասխան մասնագետի եզրակացությունը, դիմումի քննարկման հետագա ընթացքը կարգավորվում է սույն կանոնադրության ,Հողնառանց հրապարակային սակարկության տրամադրելու կարգի կանոններով:

V. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ

8. Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի ,Քաղաքաշինական
աստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատվելու մասին թիվ 711Ն որոշմանը
համապատասխան իրականացված փորձաքննության եզրակացությունը (բացառությամբ սահմանված դեպքերում և
կարգով նախագծողի գրավոր երաշխավորագրով թողարկված նախագծերի):

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխանեզրակացություն՝ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:

VI. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ԴՐԱՆՅ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

10. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան իրազեկություններով օժտված անձը:
11. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի, Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին թիվ 88 որոշմամբ սահմանված կարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Բերքանուշ համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

VII. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող:
13. Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական, Կարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ փաստաթղթերով:

VIII. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱՌՈՒՄՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՆՈՂՈՂԳԻՍՆ

14. Համայնքի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական, այնպես էլ արդի ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը՝ պայմանով, որ կատարվեն ճաշակով և մասնագիտական բարձր վարպետությամբ: Իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրին հարազատ մնալու, չխաթարելու, այլ ընդհակառակը, բարելավելու, զարգացնելու անհրաժեշտությունը:

2) համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառները ծածկոցով և նստարաններով հագեցնել և ձևավորել գեղարվեստական ճաշակով բարձրորակ շին. նյութերով,

3) հասարակական նշանակության շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախագուշացման միջոցներով):

IX. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

15. Քաղաքաշինական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար պարտադիր են քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, որը ապահովում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

16. Նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

17. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի հաստատումից հետո, համայնքի ղեկավարի կողմից:

18. Շինարարության թույլտվություն չի պահանջվում շենքերի, շինությունների, ընթացիկ վերանորոգման, շենքերի հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի

պատակային օգտագործումը կամ չեն հակասում սահմանված սերվիտուտներին, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

19. Քանդման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

20. Քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

21. Ավարտված շինարարության փաստագրումը կատարվում է միմիայն շահագործման ընդունող հանձնաժողովի ակտով: Ավարտված շինարարության շահագործման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

22. Օբյեկտների կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության օրենքով՝ սահմանված կարգով նախագծերի ձեռքբերման, փորձաքննության անցկացման, շինարարության թույլտվության ստացումով:

Ճ. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

24. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

ՃԻ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

25. Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:

26. Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:

27. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

28. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:

29. Շինարարության (քանդման) թույլտվությունը Բերքանուշ համայնքում տալիս է Բերքանուշ համայնքի ղեկավարը՝ Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի,

Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին թիվ 91 որոշմամբ սահմանված կարգով:

30. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, ժե կետով նախատեսված ժամկետով:

31. Շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով:

32. Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանք հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:

33. Բերքանուշ համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:

ХII. ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՍՏԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ
ԿԱՐԳԸ

34. Բերքանուշ համայնքում շինարարության ավարտը փաստագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի, Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգով, նույն որոշմամբ հաստատված ձևի շինարարության շահագործման ակտի ձևակերպմամբ, նախագծով նախատեսված շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացումից հետո:
35. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:
36. Բնքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փաստագրման:
37. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 86-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 86-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

ХIII. ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

38. Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43րդ հոդվածի համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում՝
- 1) հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.
 - 2) հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ.
 - 3) հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ.
 - 4) հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.
39. Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում:

ХIV. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

40. Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի նամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:
41. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219.1 հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը քննում է շենքեր և շինություններին քննակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը չավարտելու վերաբերյալ գործերը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N° 17-Ն

«17 » «08 » 2017թ.

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Համայնքի փողոցների հիմնանորոգման նպատակով ֆոնդային բյուջեի պահուստային միջոցներից (900412161342 11.01.02.52) 1915.0 դրամ տեղափոխել – (900412161060 04.05.01.58) ծախսերի գործառնական դասակարգման <<Մայրուղիների և փողոցների վերականգնման և հիմնանորոգման>> ծրագրի 5113 հոդվածի վրա:

Որոշումը քննդրվեց միաձայն

1. Բաղդամյան Սուրիկ
2. Իսաջանյան Գոհարիկ
3. Հովսեփյան Հովսեփ
4. Պետրոսյան Մելսիդա
5. Վարդանյան Տիգրան
6. Աղամյան Վարդան

կողմ

կողմ

կողմ

կողմ

կողմ

կողմ



Համայնքի ղեկավար

Մ.Գ. Հայրապետյան